ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

Երևանի Կարլ Մարքսի անվան Պոլիտեխնիկական ինստիտուտը Պետական համալսարանից հետո երկրորդ խոշոր բարձրագույն ուսումնական հաստատությունն է մեր ռեսպուբլիկայում։ Նա ստեղծվել է Երևանի Պետական համալսարանի տեխնիկական ֆակուլտետի բազայի վրա, 1930 թվականին։ Ինստիտուտի հիմնադրման գործում մեծ վաստակ ունեն Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ալեքսանդր Հակոբյանը, ականավոր գիտնականներ Ստեփան Ղաբարյանը, Հովհաննես Ռուխիկյանը, Արշակ Տոնյանը, որոնք երկար տարիներ աշխատել են ինստիտուտում և բացառիկ հոգատարությամբ պատրաստել ձեռնհաս կադրեր։ Այդ կադրերից շատերը այժմ դարձել են ճանաչված գիտնականներ ու մանկավարժներ և աշխատում են ինստիտուտում։ Սկզբնապես ինստիտուտում սովորել են 465 ուսանող։ Գործունեության վաղ շրջանում ինստիտուտն ունեցել է 60 դասախոս, որոնք սովորող երիտասարդներից պատրաստել են ճարտարապետներ, քաղաքացիական, արդյունաբերական և հիդրոտեխնիկական շինարարության ինժեներներ, քիմիկոս-տեխնոլոգներ։

Անցած երեսուն տարիների ընթացքում ինստիտուտը տվել է տարբեր մասնագիտություններով շուրջ 6000 ինժեներներ, որոնք աշխատում են ռեսպուբլիկայի արդյունաբերության և շինարարության բնագավառում, նախագծային, գիտա-հետազոտական ինստիտուտներում, պետական ապարատում, ժողովրդական տնտեսության ղեկավար օրգաններում։ Զգալի է ինստիտուտն ավարտած այն մասնագետների թիվը, որոնք աշխատում են ռեսպուբլիկայից դուրս՝ Սովետական Միության տարբեր շրջաններում։ Այժմ ինստիտուտում սովորում են մոտ 3000 ուսանողներ, որոնք ընդգրկված են հինգ ֆակուլտետներում, ուր աշխատում են 250 դասախոս։ Դասախոսների մեծ մասը դոկտոր-պրոֆեսորներ ու տեխնիկական գիտությունների թեկնածուներ են։ Բացի այդ ինստիտուտն ունի ուսումնա-օժանդակ 300 աշխատակից։

Ինստիտուտի շինարարական ֆակուլտետը մասնագետներ է պատրաստում ռեսպուբլիկայում լայնորեն ծավալվող շինարարության համար։ Ֆակուլտետը պատրաստում է բարձրորակ ինժեներ-շինարարներ, որոնք աշխատում են նախագծային ինստիտուտներում, շինարարական հրապարակներում, հիդրոէլեկտրակայանների ու հիդրոտեխնիկական կառուցվածքների, կամուրջների ու ճանապարհների շինարարության բնագավառում։ Շինարարության ֆակուլտետի ճարտարապետության բաժինը ավարտած բազմաթիվ մասնագետներ նախագծել ու պլանավորել են հայրենի քաղաքներն ու գյուղերը, կառուցել են էսթետիկական բարձր ճաշակով հարմարավետ բնակելի տներ, արդյունաբերական ձեռնարկություններ, կուլտուրայի և գիտության օջախներ։ Այդ կառուցումների մեջ հայ ճարտարապետության դարավոր ժառանգությունը զուգորդված է շինարարական տեխնիկայի արդի նվաճումների հետ։

Ժողովրդական տնտեսության և կենցաղի մեջ կատարված տեղաշարժերի կապակցությամբ շինարարական ֆակուլտետում հիմնվել են մասնագիտական նոր բաժիններ, որոնք պատրաստում են ջերմա-գազամատակարարման և ջրմուղ-կոյուղու շինարարության ինժեներներ։ 1960 թվականի փետրվարին Օրևանը եղբայրական Ադրբեջանից գազ ստացավ։ Գազը կօգտագործվի արդյունաբերության մեջ, իսկ Երևանի և ռեսպուբլիկայի մյուս քաղաքների բնակիչները կօգտվեն բնական և հեղուկ գազից։ Կենցաղում լայն կիրառում կգտնի արդյունաբերությունից և ջերմաէլեկտրակայաններից ստացված տաք ջրի օգտագործումը։ Նկատի ունենալով ժողովրդական տնտեսության մեջ և կենցաղում կատարված տեղաշարժն ու նրա հեռանկարները, ֆակուլտետը ընդլայնել է իր նոր հիմնած բաժինները՝ օգտագործելով Ռուսաստանի և Ադրբեջանի փորձը։

Անցած տարիներին Հայաստանում ստեղծվեցին քիմիական արդյունաբերության բազմաթիվ ճյուղեր, որոնք 1959—1965 թվականներին կաճեն ավելի քան 3 անգամ։ Այդ նպատակի համար որպես հումք լայնորեն կօգտագործվեն բնական գազը, Հայաստանի լեռնաշխարհի բազմաթիվ բնական հարստությունները։

Քիմիական արդյունաբերության համար ինժեներ-տեխնոլոգներ են պատրաստում ինստիտուտի Քիմիկո-տեխնոլոգիական ֆակուլտետի հիմնական օրգանական սինթեզի և էլեկտրաքիմիական արտադրության տեխնոլոգիայի բաժինները, Սիլիկատների տեխնոլոգիայի բաժին, ինժեներներ է պատրաստում շինանյութերի արդյունաբերության, ինչպես նաև կերամիկայի արտադրության ու էլեկտրալամպերի արտադրության մեջ աշխատելու համար։ «Օգտակար հանածոների տեղավայրերի մշակում» մասնագիտության գծով ավարտած ինժեներները աշխատում են լեռնահանրային արդյունաբերության մեջ։

Համեմատաբար ավելի կարճ պատմություն ունեն ինստիտուտի էլեկտրատեխնիկական և մեխանիկական ֆակուլտետները, որոնք կադրեր են պատրաստում հարաճուն կերպով զարգացող արդյունաբերության նոր ճյուղերի՝ էլեկտրամերենաշինության, դազգահաշինության, սարքաշինության և արդյունաբերության այլ ճյուղերի համար։

Էլեկտրատեխնիկական ֆակուլտետի ավելի հին մասնագիտական բաժիններն են էլեկտրական կայանների, ցանցերի ու սիստեմների, արդյունաբերական ձեռնարկությունների էլեկտրիֆիկացիայի, սարքավորման և կարելային ու էլեկտրամեկուսիչ տեխնիկայի բաժինները։ Այդ մասնագիտություններով ինժեներ-էլեկտրիկներն աշխատում են հիդրոէլեկտրակայաններում, էլեկտրահաղորդման գծերում ու սիստեմներում, արդյունաբերական ձեռնարկություններում և շինարարության մեջ։ Ֆակուլտետի էլեկտրական մեքենաների և ապարատների նախագծման բաժին ավարտած ինժեներ-էլեկտրամեխանիկներ որպես ինժեներ կոնստրուկտորներ աշխատում են էլեկտրամերենաշինական արդյունաբերության մեջ՝ հին մերենաները վերափոխելու և նոր ժամանակակից մերենաներ ստեղծելու վրա։ Վերջին երեք տարիների ընթացքում ֆակուլտետում բացվել են մասնագիտական նոր բաժիններ, որոնց դասընթացներն ավարտող ուսանողները կաշխատեն այժմ ռեսպուբլիկայում ստեղծվող արդյունաբերական նոր ճյուղերում, գիտա-հետազոտական ինստիտուտներում և կոնստրուկտորական բյուրոներում։

Ինստիտուտի նորակառույց ուսումնական շենքը

Ինստիտուտի մեխանիկական ֆակուլտետը այս տարի տվեց իր շրջանավարտների 10-րդ մեծ խումբը։ Ֆակուլտետի մերենաշինության տեխնոլոգիայի մասնագիտական բաժնի շրջանավարտները աշխատում են ռեսպուբլիկայի արդյունաբերության մեջ որպես ինժեներ-կոնստրուկտորներ, մետալուրգներ, տեխնոլոգներ։ Այս ֆակուլտետում վերջին երկու տարվա ընթացքում ժողովրդական տնտեսության պահանջներից ելնելով կազմակերպվել են մասնագիտական նոր բաժիններ, որոնց շրջանավարտներն աշխատելու են ճշգրիտ մեխանիկայի սարքերի, շինարարական և ճանապարհային մերենաների, քիմիական արդյունաբերական մերենաների, ձուլման արտադրության մեքենաների և տեխնոլոգիայի, սև և գունավոր մետաղների ձուլման արտադրության մեջ։

Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը 1953 թվականին կազմակերպել է Երևանյան ռեռակա ուսուցման ֆակուլտետ, ուր ընդգրկվում են արտադրության մեջ աշխատող երիտասարդները։ Այդ երիտասարդները արտադրության մեջ գալով միջնակարգ դպրոցներից և միջնա-

նարդ մասնագիտական ուսումնական հաստատություններից, այստեղ հարստացնում են իրենց գիտելիքները, զուգորդում արտադրության և շինարարության մեջ կուտակած իրենց աշխատանքային փորձը ֆակուլտետում ձեռք բերած տեսական գիտելիքների հետ։ Այժմ այդ ֆակուլտետում սովորում է մոտ 800 ուսանող և արդեն երկրորդ տարին է, ինչ նա տալիս է իր շրջանավարտները։

Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և երկրում ժողովրդական կրթության գործի հետագա բարելավման մասին ՍՍՌ Միության Գերագույն Սովետի և Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընդունած օրենքի համաձայն 1959—60 ուսումնական տարվա սկզբից ինստիտուտի տարբեր ֆակուլտետների առաջին կուրսերն ընդունված բոլոր ուսանողները աշխատում են արդյունաբերության և շինարարության մեջ։ Ուղենիշ ունենալով միութենական և ռեսպուբլիկական կառավարությունների որոշումները, ինստիտուտի դիրեկցիան և դասախոսական կազմը վերակառուցեցին ուսումնա-մեթոդական աշխատանքը՝ հատուկ ուշադրություն դարձնելով արտադրության մեջ աշխատող ուսանողների ուսման պրոցեսի կազմակերպման հարցերին։ Կազմակերպվեցին լրացուցիչ կոնսուլտացիաներ, հրատարակվեցին մեթոդական ձեռնարկներ և առաջադրանքներ առաջին կուրսեցիների համար։ Վ. Ի. Լենինի անվան հայէլեկտրագործարանի տարբեր ցեխերում աշխատում են տեխնիկական ֆակուլտետի ուսանողները, որոնք այնտեղ ձեռք են բերում աշխատանքային մասնագիտացում։ Աշխատանքային ուսուցումը լավ է կազմակերպված նաև Ջերժինսկու անվան դազգահաշինական գործարանում, ավտոպահեստամասերի գործարանում, շինարարության մեջ։ Անցած ուսումնական տարին ցույց տվեց, որ ուսանողները արագ կերպով խորանում են արտադրական պրոցեսների էության մեջ, ուսումնասիրում են տեխնիկական գրականությունը, հանդես են գալիս ռացիոնալիզատորական առաջարկություններով և դիտողություններով։ Արտադրական ուսուցման բարելավման ուղղությամբ զգալի փոփոխություններ են կատարվել նաև բարձր կուրսերի ուսումնական ծրագրերում։ Ուսանողների արտադրական և նախադիպլոմային պրակտիկաներն անցնում են ռեսպուբլիկայի առաջավոր ձեռնարկություններում և շինարարական հրապարակներում, ինչպես նաև միության խոշոր արդյունաբերական կենտրոններում՝ Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում, Մինսկում, Բաքվում, Կրամատորսկում և այլն։ Այս տարի մեծ թվով դիպլոմային աշխատանքներ գործնական, արտադրության հետ կապված բնույթի էին։ Էլեկտրատեխնիկական և մեխանիկական ֆակուլտետների մի խումբ ուսանողներ իրենց դիպլոմային աշխատանքները կատարեցին Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանում։ Նրանց զգալի մասը այդ աշխատանքները պաշտպանեցին գերազանց գնահատականներով և այժմ աշխատում են արտադրության մեջ ներդնել այն, ինչ մտահղացել էին իրենց դիպլոմային նախագծերում։

Ինչպես ցույց տվեց պրակտիկան, այս վերափոխումները զգալի չափով նպաստում են պատրաստվող մասնագետների որակի հետագա բարձրացման գործին։ Ուսանողների զգալի մասը հաղթահարելով ուսումը աշխատանքի հետ կապելու որոշ դժվարությունները, հասավ լավ ցուցանիշների թե՛ ուսման մեջ և թե՛ աշխատանքում։

Անցած ուսումնական տարին Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի կյանքում բերեց այլ փոփոխություններ ևս։ 1959 թ. սեպտեմբերից Հայաստանի կառավարության որոշմամբ մի շարք մասնագիտությունների գծով ինստիտուտի ցերեկային և երեկոյան ուսուցման բաժանմունքներ բացվեցին ռեսպուբլիկայի երկու քաղաքներում՝ Լենինականում և Կիրովականում։ Դա լայն հնարավորություններ կստեղծի ռեսպուբլիկայի հեռավոր շրջանների երիտասարդությունից մեծ թվով մասնագետներ պատրաստելու համար։ Այժմ այդ բաժանմունքներում կազմակերպվում են կաբինետներ և լաբորատորիաներ, ստեղծվում են բոլոր անհրաժեշտ պայմանները բարձրորակ ինժեներական կադրեր պատրաստելու համար։ Այս տարի սեպտեմբերի 1-ից բաժանմունք բացվեց նաև Երևանի Վ. Ի. Լենինի անվան հայէլեկտրագործարանում։

Ինստիտուտի մանկավարժական կոլեկտիվը և ուսանողությունը ջերմությամբ ընդունեցին այն լուրը, որ իրենց մոտ սովորելու են գալիս սփյուռքահայ երիտասարդության ներկայացուցիչները։ Արդեն երրորդ տարին է, ինչ Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտում սովորում են Միացյալ Արաբական Ռեսպուբլիկայի Սիրիական շրջանից, Իրաքից և Լիբանանից եկած երիտասարդները։ Ի դեպ, հիշենք, որ այս ուսանողները մեզ մոտ ոչ միայն ազատված են ուսման վարձ վճարելու հոգսից, մի հանգամանք, որ նրանց առաջ մեծ դժվարություններ էր հարուցում արտասահմանում (Մարդիրյան Վարուժանը, օրինակ, Բեյրութի ամերիկյան համալսարանում մեկ տարի ուսանելու համար ստիպված էր եղել վճարել 1200 դոլլար՝ որպես ուսման վարձ), այլև ստանում են բարձր թոշակ, լրա-

ցուցիչ նպաստ ամառվա ամիսների համար, ապահովված են հանրակացարանով։

Սովետական պետությունը զգալի միջոցներ է տրամադրում Պոլիտեխնիկական ինստիտուտի նյութատեխնիկական բազան հարստացնելու համար։ Այդ ուղղությամբ մեծ գործ կատարվեց հատկապես Հայրենական Մեծ պատերազմից հետո։ 1955 թվականին շահագործման հանձնվեց ինստիտուտի նոր ուսումնական կորպուսի առաջին մասը մոտ 0-տասնյակ լսարաններով, կաբինետներով, լաբորատորիաներով և ընդարձակ ընթերցասրահով, իսկ 1959 թ. նոյեմբերին երկրորդ մասը՝ համարյա նույնպիսի մակերեսով։ 1960—1961 ուս. տարվա ընթացքում շահագործման կհանձնվեն դահլիճ-գրադարանային կորպուսը և գիտա-հետազոտական աշխատանքների կորպուսը։ 1961 թ. սկզբից կսկսվի ինստիտուտի ուսումնա-արտադրական խոշոր արհեստանոցի և ուսումնական մի նոր շենքի շինարարությունը։ Մոտակա տարիներին կկառուցվեն նաև ուսումնական այլ շենքեր։ Բարելավվում են նաև դասախոսների և ուսանողության կենցաղային պայմանները։ 1956 թ. շահագործման հանձնվեց 200 տեղանոց ուսանողական նոր հարմարավետ հանրակացարանը, իսկ 1959 թ. նոյեմբերին սկսեց գործել ուսանողական ընդարձակ ճաշարանը։ 1961 թվականից կսկսվի 500 տեղանոց ուսանողական հանրակացարանի նոր շենքի կառուցումը։ Մեծ աշխատանք է կատարվել նաև պրոֆեսորա-դասախոսական կազմի կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ։ 1953, 1957 և 1960 թվականներին շահագործման հանձնվեցին երեք բնակելի շենքեր՝ մոտ 80 բնակարաններով։

Զգալի միջոցներ են ծախսվել նոր ուսումնական լաբորատորիաներ կազմակերպելու համար։ Միայն վերջին երեք տարիների ընթացքում ստեղծվել են ջերմագազամատակարարման, հաստոցների, ավտոմատիկայի և հեռուստամեխանիկայի, մաթեմատիկական հաշվիչ մեքենաների, հիմնական օրգանական սինթեզի, սիլիկատների տեխնոլոգիայի և մի քանի այլ նոր լաբորատորիաներ, նորագույն սարքավորումներով հարստացվել են մյուսները։

Այս ամենը, ինչ խոսք, հնարավորություն կտա էլ ավելի լավ կազմակերպել ամբողջ ուսումնական պրոցեսը, ուսանողների ինքնուրույն աշխատանքն ու կուլտուրական հանգիստը։

Մեծ են Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի հեռանկարները։ Հայաստանի կառավարությունը հատկապես գրաղվել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտում ինժեներական կադրերի պատրաստումը բարելավելու հարցերով և այդ մասին ընդունել համապատասխան որոշում։ Խնդիրը է դրվում զգալիորեն ավելացնել ինժեներների պատրաստումը նորագույն մասնագիտությունների գծով։ Եկող տարի ինստիտուտում կբացվի լեռնա-մետալուրգիական ֆակուլտետը իր մի շարք բաժիններով։ Թե ինչպիսի տեմպերով է աճում Պոլիտեխնիկական ինստիտուտը, ցույց է տալիս թեկուզ այն փաստը, որ եթե 1959/1960 ուսումնական տարում բոլոր մասնագիտությունների գծով ընդունելությունը կազմում էր 650 հոգի, ապա այս տարի ինստիտուտ ընդունվեցին 1400 հոգի, այսինքն ավելի շատ, քան 1950 թվականին ինստիտուտում եղած բոլոր ուսանողների թիվն էր։ Դա հասկանալիորեն բացատրվում է արդյունաբերության և շինարարության համար բարձրորակ կադրերի օրավուր աճող պահանջով։

Ինստիտուտի առաջ դրված են լուրջ խնդիրներ, որոնց լուծումը կարող է իրականացնել ինստիտուտի դասախոսական հեղինակավոր կոլեկտիվը, որի շարքերում աշխատում են Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, պրոֆեսոր Մարտին Կուսյանը, թղթակից-անդամ պրոֆեսոր Օգսեն Սապոնջյանը, գիտության ու տեխնիկայի վաստակավոր գործիչներ՝ պրոֆեսոր Լևոն Մանուչարյանը, պրոֆ. Գուրգեն Օգանեսովը և դոցենտ Ռուբեն Հակոբյանը, Հայկ. ՍՍՌ վաստակավոր շինարար, պրոֆեսոր Սիմոն Հովնանյանը, պրոֆեսորներ Լևոն Ղազարյանը, Թորգոմ Խաչատրյանը, Երեմ Սաֆարովը, Վելիխան Վալեսյանը, Ազատ Ալչուջյանը և ուրիշներ։

Կադրերի պատրաստման ուղղությամբ շնորհակալ աշխատանք են կատարում ամբիոնի վարիչներ, դոցենտներ Վրույր Թորգոմյանը, Ավետիք Տեր-Իսրայելյանը, Վարազդատ Հարությունյանը, Վաղարշակ Հովսեփյանը, Գեորգի Մնեյանը, Ռուբեն Ախշարումովը, Վիկտոր Պետրոսյանը և ուրիշներ։

Վերջին տարիների ընթացքում աճել են գիտա-մանկավարժական նոր կադրեր, հատկապես նորագույն մասնագիտությունների գծով։ Ինժեներական կադրերի պատրաստման գործում պրոֆեսորների և դոցենտների հետ միասին մեծ ու շնորհակալ աշխատանք են կատարում ինստիտուտի ուսումնա-օժանդակ աշխատողները։

Բարձրորակ ինժեներական կադրերի պատրաստման հետ միասին ինստիտուտի գիտական կոլեկտիվը, որն ընդգրկված է 33 ամբիոններում, անցած տարիների ընթացքում զգալի գործ է կատարել գիտա-հետազոտական աշխատանքների, ռեսպուբլիկայի արդյունաբերության ու շինարարության կոնկրետ գործնական օգնություն ցույց տալու ուղղությամբ։ Հայաստանի արդյունաբերության մի շարք ճյուղերին, շինարարական ինդուստրիային, հիդրոէներգետիկ աշխատանքներին և այլ բնագավառներին վերա-

բերող բազմաթիվ հարցեր մշակվել և ներդրվել են ինստիտուտի կոլեկտիվի կողմից։ Ավագ և միջին սերնդի գիտնականների կողքին աճում է գիտական աշխատողների երիտասարդ սերունդը հատկապես էլեկտրատեխնիկական և մեխանիկական ֆակուլտետներում, որոնք այժմ մեծ գործ են կատարում ռեսպուբլիկայի արդյունաբերության նոր ճյուղերի զարգացման գործում։

Շինարարական ֆակուլտետն ունի 8 ամբիոն, որտեղ ընդգրկված են մանկավարժական և արտադրական հարուստ փորձ և գիտելիքներ ունեցող դասախոսներ։ Այդ ֆակուլտետի ճարտարապետության ամբիոնը ղեկավարում է դոցենտ Վարազդատ Հարությունյանը։ Նրա գրչին են պատկանում ճարտարապետության պատմության հարցերի լուսաբանմանը նվիրված բազմաթիվ աշխատություններ, նա միաժամանակ ռեսպուբլիկայի Ճարտարապետների միության նախագահի տեղակալն է։ Ամբիոնի դոցենտ Արտաշես Մամիջանյանը կարևոր աշխատանքներ է տանում տուֆ քարից բարակ պատերի նոր կոնստրուկցիաներ մշակելու ուղղությամբ։ Դոցենտ Հրայր Ռսաբեկյանը քաղաքաշինարարության լավագույն մասնագետներից է։ Նախագծային ինստիտուտներում իր տարած աշխատանքին զուգընթաց երկար տարիներ ինստիտուտում է աշխատել նաև ՍՍՌՄ Շինարարության և ճարտարապետության ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Սամվել Սաֆարյանը։

Ֆակուլտետի արդյունաբերական և քաղաքացիական շինարարության մասնագիտության գծով ինժեներ-շինարարների պատրաստման գործում որոշող դեր են խաղում շինարարական կոնստրուկցիաների (վարիչ դոցենտ Ավետիք Տեր-Իսրայելյան) և շինարարական արտադրության (վարիչ դոցենտ Ստեփան Սարուխանյան) ամբիոնները։ Ավտոմոբիլային ճանապարհների և կամուրջների շինարարության ամբիոնը ղեկավարում է նույն մասնագիտությամբ ինժեներների պատրաստման գործը։ Ամբիոնը ղեկավարում է Հայկ. ՍՍՌ վաստակավոր շինարար, պրոֆեսոր Սիմոն Հովնանյանը։ Նա երկար տարիներ զբաղվում է իր սիրելի մասնագիտությամբ և բարձրորակ շինարար մասնագետի անուն է վաստակել ռեսպուբլիկայում։ Նա է եղել Երևանի երկու նոր մեծ կամուրջների շինարարության գլխավոր ինժեները։ 1958 թ. Ս. Հովնանյանը մասնակցեց շինարարների համամիութենական խորհրդակցությանը և նույն թվականին էլ իր երկարատև ամբասիր աշխատանքի համար ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության հրամանագրով պարգևատրվեց Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով։ Այժմ էլ պրոֆեսոր Հովնանյանը չի կտրվում շինարարական պրակտիկայից։ Շինարարական աշխատանքի հարուստ փորձով նույն ամբիոնում աշխատում են դոցենտներ Արշավիր Ազատյանն ու Գևորգ Հակոբյանը։

Հիդրոտեխնիկական շինարարության համար կադրերի պատրաստման ուղղությամբ է աշխատում հիդրոտեխնիկական շինարարության ամբիոնը՝ դոցենտ Դ. Ավարկցյանի ղեկավարությամբ, ինչպես և հիդրավլիկայի և ջրամատակարարման ամբիոնը։ Ամբիոնի անդամները դոցենտ Վաղարշակ Հովսեփյանի ղեկավարությամբ երկար տարիներ շնորհակալ աշխատանք են կատարում ռեսպուբլիկայի լեռնային շրջաններում ոռոգման նպատակներով հիդրոտարաններ օգտագործելու ուղղությամբ։ Հայաստանի կառավարությունը ամբիոնի կատարած ուսումնասիրությունների հիման վրա 1955 թ. մայիսին հատուկ որոշում ընդունեց հիդրոտարանները գյուղատնտեսության մեջ ներդնելու մասին։ Այժմ ամբիոնի մշակած կատարելագործված հիդրոտարանները հաջողությամբ աշխատում են ռեսպուբլիկայի մի քանի տասնյակ կոլտնտեսություններում։ Այդ տարանի նմուշը ցուցադրվեց Մոսկվայում, ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսում. դոցենտ Հովսեփյանը և ամբիոնի ասիստենտ Աշոտ Իսկանդարյանը պարգևատրվեցին դիպլոմով, ցուցահանդեսի երկրորդ աստիճանի կրծքանշանով և արժեքավոր նվերով։

Դեռևս Պետ.կան համալսարանի տեխնիկական ֆակուլտետում, ապա՝ Պոլիտեխնիկական ինստիտուտում սկսած վերջինիս հիմնադրման օրից, կառուցվածքների ստատիկայի ամբիոնի աշխատանքներն է գլխավորում Հայկական ռեսպուբլիկայի գիտության ու տեխնիկայի վաստակավոր գործիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուրգեն Օգանեսովը։ Նա մեծ աշխատանք է կատարել ռեսպուբլիկայի ջրային տնտեսության կարգավորման գործում։ Նա տարիներ շարունակ աշխատել է Հայջրշինտրեստում որպես գլխավոր ինժեներ, ուսումնասիրություններ է կատարել Արարատյան դաշտավայրի ստորերկրյա ջրերի հետազոտման և դրանք ոռոգման կարիքների համար օգտագործելու բնագավառում։ Այդ ուսումնասիրությունները ամփոփված են չորս ստվարածավալ գրքերում։ Նույն ամբիոնի դոցենտ Թորգոմ Առաքելյանը ստեղծել է քառակուսի բնային ցանրի ունիվերսալ-ավտոմատ սարք։ Այդ մեքենայի փորձնական օրինակը շուտով կպատրաստվի և համամիութենական փորձարկման կենթարկվի, որով կորոշվի նրա մասսայական օգտագործման հարցը։

Ֆակուլտետի համեմատաբար երիտասարդ ամբիոններից է ջերմադազամատակարարման և

օդափոխության ամբիոնը, որը դոցենտ Լիպարիտ Ղուլոյանի ղեկավարությամբ շնորհակալ աշխատանք է կատարում ռեսպուբլիկայի համար այդ մասնագիտության գծով ինժեներներ պատրաստելու ուղղությամբ, որ առանձնապես կարևոր է ներկայումս։ Պետք է ասել, որ այս մասնագիտությամբ փորձված մասնագետները շատ քիչ են, և ամբիոնը ստիպված է լինում հաղթահարել մեծ դժվարություններ։ Ամբիոնը միաժամանակ մեծ աշխատանք է կատարում գազամուղի անցկացման, ջերմաէներգետիկային վերաբերող մի շարք հարցերի ուսումնասիրության և շինարարությանն ու արդյունաբերությանը պրակտիկ օգնություն ցույց տալու գործում։

Ռեսպուբլիկայի քիմիական արդյունաբերության համար կադրեր պատրաստելու և արդյունաբերությանը կոնկրետ գործնական օգնություն ցույց տալու ուղղությամբ զգալի գործ են կատարել ինստիտուտի քիմիկո-տեխնոլոգիական ֆակուլտետի ամբիոնները։

Ֆակուլտետի հնագույն ամբիոններից է օրգանական և ֆիզիկական քիմիայի ամբիոնը, որը ղեկավարում է տեխնիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Լևոն Լազարյանը։ Նա դեռևս 1930 թ. ասիստենտի պաշտոնով աշխատանքի ներգրավվեց նորաստեղծ Պոլիտեխնիկական ինստիտուտում, իսկ արդեն մի քանի տարի հետո Հայաստանի կառավարության հանձնարարությամբ մի շարք ընկերների հետ միասին սկսեց զբաղվել կարբիդ կալցիումից սինթետիկ կաուչուկ ստանալու տեխնոլոգիական հարցերի ուսումնասիրությամբ։ Այդ աշխատանքները պսակվեցին հաջողությամբ և զգալի դեր խաղացին արտադրության այդ նոր ճյուղի ստեղծման գործում։

Ֆակուլտետի ընդհանուր և անալիտիկ քիմիայի ամբիոնը դոկտոր-պրոֆեսոր Ազատ Ալչուջյանի ղեկավարությամբ մետաղների տեխնոլոգիայի և մետաղագործության ամբիոնի հետ միասին հետաքրքիր աշխատանք է կատարում երկաթահանքների հարստացման և ուղղակի վերականգնման միջոցով երկաթի ստացման պրոբլեմների ուսումնասիրության ուղղությամբ։ Այդ աշխատանքների մի մասը հիմնականում ավարտված է։ Այդ ուսումնասիրությունները հնարավորություն կտան ավելի ամբողջական և լրիվ օգտագործել մեր ռեսպուբլիկայի բնական հարստությունները։ Վերջերս Հայպետհրատի կողմից լույս է ընծայվել նույն ամբիոնի դոցենտ Համազասպ Հովհաննիսյանի մենագրությունը «Նոր սոպոլիմերների սինթեզումը» վերնագրով, որը նվիրված է նավթանյութերից նոր տեսակի սինթետիկ նյութերի արտադրության տեխնոլոգիայի հարցերին։

Սիլիկատների տեխնոլոգիայի ամբիոնի աշխատողները, դոցենտ Խորեն Գևորգյանի ղեկավարությամբ, արդեն մի քանի տարի է հաջողությամբ աշխատում են Սևանի հյուսիս-արևելյան ափին գտնվող մագնեզիալ-սիլիկատային նյութերի օգտագործման տեխնոլոգիական պրոցեսների մշակման ուղղությամբ։ Նրանց ուսումնասիրություններից, լաբորատոր և կիսագործարանային փորձարկումներից պարզվել է, որ այդ արժեքավոր հումքը կարելի է օգտագործել բարձրորակ հրակայուն աղյուսներ, էլեկտրամեկուսիչներ և շինարարական սալիկներ ստանալու համար։ Այդ ուսումնասիրությունների հիման վրա Հայաստանի կառավարության որոշմամբ այժմ կառուցվում է փորձնական գործարան, որտեղ կկատարվի հումքի կոմպլեքս ուսումնասիրությունը, իսկ շուտով կկառուցվի նաև մեծ կոմբինատ։ Նույն ամբիոնի դոցենտ Հայրիկ Դրիգորյանը կարևոր աշխատանք է կատարում ռեսպուբլիկայում գունավոր մետալուրգիայի զարգացման հետ կապված հարցերի ուսումնասիրության համար։

Արտադրությանը պրակտիկ օգնություն ցույց տալու ուղղությամբ երկար տարիներ զգալի աշխատանք է տարվում ֆակուլտետի հիմնական օրգանական սինթեզի ամբիոնում՝ դոցենտ Համբարձում Սայադյանի ղեկավարությամբ։ Վերջին տարիներին դոցենտ Սայադյանը, ամբիոնի դոցենտ Հակոբ Հակոբյանի հետ միասին, աշխատանքներ ծավալեցին Երևանի Պոլիվինիլացետատ գործարանի կենտրոնական լաբորատորիայում։ Գործարանում ներդրվեց ամբիոնի կատարած փորձերից մեկը՝ մաքուր, անջատված քացախաթթվական նատրիումի ստացումը նախկինում չօգտագործվող թափթրփուկ հանդիսացող նյութերից։ Միանգամայն դրական արդյունքներ ստացվեցին քացախաթթվի մաքրումը մրջնաթթվից թեմայի շուրջը։ Այդ ներդրումների շնորհիվ գործարանը տարեկան մի քանի միլիոն ռուբլու լրացուցիչ եկամուտ է ստանում։

Ամբիոնը կատարում է նաև այլ ուսումնասիրություններ։

Ինստիտուտի էլեկտրատեխնիկական ֆակուլտետի ամբիոնները, չնայած իրենց կարճ պատմությանը, մեծ և շնորհակալ աշխատանք են կատարել և՛ ռեսպուբլիկայի նոր զարգացող արդյունաբերության ճյուղերի համար մասնագետներ պատրաստելու և՛ արդյունաբերությանը պրակտիկ օգնություն ցույց տալու ուղղությամբ։ Բացի մի քանի ընկերներից, ամբիոնների հիմնական կազմը ինստիտուտի նախկին շրջանավարտներն են, որոնք ավարտելով ինստիտուտը և միության առաջավոր բարձրագույն ուսումնական հաստատությունների ասպիրանտուրան,

այժմ ինստիտուտում մանկավարժական և գիտական աշխատանք են կատարում։

Ֆակուլտետի տեսական և ընդհանուր էլեկտրատեխնիկայի ամբիոնը ղեկավարում է տեխնիկական գիտությունների գոկտոր-պրոֆեսոր Հրանտ Ադոնցը, որը միաժամանակ Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի էլեկտրատեխնիկայի ինստիտուտի դիրեկտորն է։ Ամբիոնի անդամները զբաղված են մի շարք կարևոր տեսական և պրակտիկ հարցերի ուսումնասիրությամբ։ Արդյունաբերական ձեռնարկությունների էլեկտրիֆիկացիայի ամբիոնը, (ամբիոնի վարիչ դոցենտ Էմիլ Դիլանյան) ապահովում է արդյունաբերական ձեռնարկությունների էլեկտրիֆիկացիա և էլեկտրական մեքենաներ և ապարատներ մասնագիտությունների գծով ինժեներների պատրաստումը։ Միաժամանակ ամբիոնի անդամների մեծ մասը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում ռեսպուբլիկայի էլեկտրամեքենաշինական արդյունաբերության զարգացման հարցերին։

Ֆակուլտետի էլեկտրական կայաններ, ցանցեր, սիստեմներ և բարձր լարվածության տեխնիկա ամբիոնը ապահովում է նույն անունը կրող մասնագիտության պատրաստումը։ Միաժամանակ ամբիոնի անդամները աշխատանքներ են տանում ռեսպուբլիկայի էներգետիկ տնտեսության հարցերի ուսումնասիրության ուղղությամբ։ Արդեն մոտ 20 տարի ամբիոնը ղեկավարում է տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Վիկտոր Պետրոսյանը, որը մի շարք տարիներ եղել է նաև Երգէսի դիրեկտորը։ 1956 թ. լույս տեսավ նրա «Բարձր լարվածության տեխնիկա» ծավալուն աշխատությունը, որը ուսումնական լուրջ ձեռնարկ է բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների և արդյունաբերության ու էներգետիկ սիստեմում աշխատող մասնագետների համար։

Միայն մեկ տարվա պատմություն ունի ֆակուլտետի ավտոմատիկայի և մաթեմատիկական մեքենաների ամբիոնը, որը ղեկավարում է երիտասարդ շնորհալի դոցենտ Գեորգի Արեշյանը։ Ամբիոնը կարճ ժամանակամիջոցում ստեղծեց իր հարուստ լաբորատոր բազան և արդեն միանգամայն ի վիճակի է նորագույն մասնագիտությունների գծով ինժեներներ պատրաստելու։

Ինստիտուտի մեխանիկական ֆակուլտետում գործում է 3 ամբիոն։ Ֆակուլտետի հիմնական մասնագիտական ամբիոնն է մեքենաշինության տեխնոլոգիա, մետաղահատ հաստոցներ և գործիքներ ամբիոնը։ Իր հիմնադրման օրից՝ 1946 թվականից ամբիոնը ղեկավարում է Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, տեխնիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Մարտին Կասյանը, որի գրչին են պատկանում կտրման տեսության վերաբերյալ մի շարք աշխատություններ։ Մ. Կասյանը ոչ միայն մեր ռեսպուբլիկայում, այլև նրա սահմաններից դուրս հայտնի է որպես բարձրորակ մասնագետ և մանկավարժ։ Նրա գիտական ղեկավարությամբ մոտ 3 տասնյակ երիտասարդներ պատրաստել ու պաշտպանել են թեկնածուական դիսերտացիաներ և այժմ տանում են գիտական ու մանկավարժական աշխատանք։ Պրոֆեսոր Կասյանը վերջին երեք տարիների ընթացքում միաժամանակ ղեկավարում է ռեսպուբլիկայի Մինիստրների Սովետին կից Գիտա-տեխնիկական խորհուրդը։

Ամբիոնի մի խումբ ընկերներ, դոցենտ Վահան Հակոբյանի ղեկավարությամբ, Հայաստանի Ժողտնտխորհի հանձնարարությամբ կատարում են ռեսպուբլիկայի էլեկտրամեքենաշինական արդյունաբերության համար խիստ կարևորություն ներկայացնող ուսումնասիրություն՝ նվիրված կարծր համաձուլվածքներից դրոշմոցների պատրաստմանը։ Գնահատելին այն է, որ այդ թեմայի իրագործմանը ակտիվ կերպով մասնակցում են նաև ուսումնա-օժանդակ կազմը և ուսանողները։

Գիտա-մանկավարժական գնահատելի աշխատանք են կատարում նաև ֆակուլտետի մյուս երկու ամբիոնները՝ մեխանիզմների տեսության և մեքենաների մասեր ամբիոնը (վարիչ դոցենտ Ռուբեն Ախշարումով) և մետաղագործության և մետաղների տեխնոլոգիայի ամբիոնը (վարիչ՝ Տաճատ Ավանեսյան)։

Բացի ֆակուլտետներում եղած ամբիոններից, գործում են նաև ընդհանուր ինստիտուտային մի շարք ամբիոններ։

Ուսանողության կոմունիստական դաստիարակության կարևոր խնդրի հետ միասին գիտա-հետազոտական աշխատանքով են զբաղվում ինստիտուտի ՍՄԿՊ պատմության և քաղաքատնտեսության ամբիոնների աշխատողները։ Նրանց մի շարք հետազոտությունները նվիրված են Անդրկովկասի և Հայաստանի բանվորական ռևոլյուցիոն շարժումների պարզաբանման և մասնավորապես այդ շարժման մեջ Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ականավոր գործիչ Ստեփան Շահումյանի կատարած դերի լուսաբանման հարցերին։ Երկու տարի առաջ ամբիոնի աշխատակիցները հրատարակեցին գիտական աշխատությունների առանձին ժողովածու, շուտով լույս կտեսնի երկրորդը։ Առանձին գրքով լույս է տեսել ՍՄԿՊ պատմության ամբիոնի վարիչ, դոցենտ Գ. Մնեյանի «Բոլշևիկյան կազմակերպությունները Հայաստանում 1905—1907 թվականներին» աշխա-

տությունը, ինչպես նաև դոցենտներ Ա. Ասըրյանի և Ս. Հարությունյանի աշխատությունները։

Երիտասարդ մասնագետների պատրաստմամբ և գիտական հետազոտություններով է զբաղվում արդյունաբերության էկոնոմիկայի կազմակերպման և պլանավորման ամբիոնը։ Ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Երեմ Սաֆարովը զբաղվում է հիդրոէլեկտրակայանների էկոնոմիկ պարամետրերի ընտրման հարցով, որին նվիրված են նրա մի շարք աշխատություններ։ Պրոֆեսոր Սաֆարովը ինստիտուտի ուսանողներին ու մասնագետներին օգնելու նպատակով գրել է «Հիդրոէլեկտրակայանները» գիրքը։ Ինժեներական հիդրոլոգիայի հարցերին են նվիրված դոկտոր-պրոֆեսոր Վելիխան Վալեսյանի աշխատանքները։ Ուշագրավ է նրա աշխատությունը՝ նվիրված լեռնային գետերի հոսքի ուսումնասիրությանը, որը լույս է ընծայվել 1955 թվականին ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի կողմից։ Պրոֆեսոր Վալեսյանը կազմել է նաև Հայկական ՍՍՌ գետերի հիդրոլոգիական մի շարք քարտեզներ, հատուկ ուսումնասիրություններ ունի Սևանա լճի ջրային բալանսի մասին։

Ուսումնական և գիտա-հետազոտական աշխատանքում կարևոր տեղ են գրավում նյութերի դիմադրության և տեսական մեխանիկայի ամբիոնները։ 20 տարուց ավելի նյութերի դիմադրության ամբիոնի աշխատանքները գլխավորում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, դոկտոր-պրոֆեսոր Օգսեն Սապոնջյանը. 1939 թվականից տեսական մեխանիկայի ամբիոնն է ղեկավարում դոկտոր-պրոֆեսոր Թորգոմ Խաչատրյանը։ Նրանք երկուսն էլ շինարարական մեխանիկայի գծով խոշորագույն մասնագետներ են, որոնց կատարած աշխատանքները բարձր գնահատականի են արժանացել ամբողջ միության մեջ։ Նրանք շնորհակալ աշխատանք են կատարել նաև ասպիրանտուրայի միջոցով երիտասարդ մասնագետներ պատրաստելու ուղղությամբ։

Ինստիտուտի գեոդեզիայի ամբիոնը հիմնադրման օրից ղեկավարում է գիտության ու տեխնիկայի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Լևոն Մանուչարյանը, որը ռեսպուբլիկայի ամենահին տեխնիկական մասնագետներից է։ Արդեն 1922 թվականից նա Երևանի Պետական համալսարանի գեոդեզիայի ամբիոնի վարիչն էր, իսկ 1930 թվականից իր ամբիոնի և լաբորատորիայի հետ աշխատանքի է փոխադրվում նոր բացված Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը։ Պրոֆեսոր Մանուչարյանը մայրենի լեզվով առաջին գեոդեզիայի դասագրքի հեղինակն է։ Դասագիրքն ունեցել է մի շարք հրատարակություններ։

Երիտասարդ մասնագետների պատրաստման ուղղությամբ շնորհակալ աշխատանք են կատարում նաև ֆիզիկայի, գծագրական երկրաչափության և գրաֆիկայի, բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնները։ Պետք է նշել հատկապես բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ, դոցենտ Վրույր Թորգոմյանի երկարամյա և բազմաբեղուն մանկավարժական գործունեությունը, որը 1932 թվականից սկսած գլխավորում է ամբիոնի աշխատանքները։

Ինստիտուտի ամբիոնների կողմից տարվող գիտա-հետազոտական և մեթոդական աշխատանքները ամփոփվում են ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածուներում, առանձին մենագրությունների և գիտա-հանրամատչելի բրոշյուրների մեջ, որոնք նույնպես լուրջ օգնություն են հանդիսանում արդյունաբերության աշխատողների համար։ Այդ աշխատանքների արդյունքները ամփոփվում են և դնահատվում նաև ինստիտուտի գիտական սեսիաներում, ինչպես նաև Անդրկովկասի եղբայրական ռեսպուբլիկաների տեխնիկական բուհերի ամենամյա գիտական սեսիաներում։

Անցած տարիների ընթացքում գիտա-մանկավարժական կադրերի պատրաստման ուղղությամբ զգալի գործ է կատարել ինստիտուտի ասպիրանտուրան։ Մոտ 25 տարվա ընթացքում ասպիրանտուրան ավարտել են 82 հոգի։ Ինստիտուտի ընդարձակման հետ միասին մեծ չափերով ընդլայնվում է նաև ինստիտուտի ասպիրանտուրան, որտեղ կադրեր կպատրաստվեն հատկապես նորագույն մասնագիտությունների գծով։ Բավական է ասել, որ այս տարի ինստիտուտի ասպիրանտուրան կընդունվեն 39 հոգի։

Այս ամենով հանդերձ, պետք է ասել, որ հատկապես գիտա-հետազոտական աշխատանքների և արտադրությանն օգնություն ցուցաբերելու գործում ինստիտուտը դեռևս լրիվ կերպով չի օգտագործում իր հնարավորությունները։ Թերություններ կան հատկապես գիտա-հետազոտական աշխատանքների ճիշտ պլանավորման, կազմակերպման և կոորդինացման ուղղությամբ։ Դեռևս ոչ բոլոր դեպքերում է այդ աշխատանքների համար ապահովվում անհրաժեշտ բազա և նյութա-տեխնիկական մատակարարում։

Այս տեսակետից լայն հնարավորություններ կբացվեն ինստիտուտում գիտա-հետազոտական սեկտորի ստեղծումով, որտեղ կաշխատեն հարյուրից ավելի գիտական աշխատողներ։ Սեկտորի համար կառուցվում է առանձին շենք, ուր կտեղավորվեն ժամանակակից սարքավորումով հագեցած մի շարք լաբորատորիաներ։ Այս հնարավորություններից լայնորեն կօգտվեն նաև ուսանողները, արմատապես

կբարելավվեն ուսանողական գիտական ընկերության աշխատանքները։

Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի անցած վերջնթաց ուղին Սովետական Հայաստանի կյանքի զարգացման արտահայտությունն է. Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության իրականացման օրինակը։

Լ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ XXV ԿՈՆԳՐԵՍԸ

1960 թ. օգոստոսի 9—16-ին Մոսկվայում գումարվեց արևելագետների Համաշխարհային XXV կոնգրեսը, որին մասնակցում էին ավելի քան 1500 պատգամավորներ՝ 60 տարբեր երկրներից։ Ի տարբերություն նախորդ կոնգրեսների, ներկա կոնգրեսում մոտ 1000 արտասահմանյան պատգամավորների 25 տոկոսը կազմում էին Ասիայի ու Աֆրիկայի երկրների ներկայացուցիչները։

Օգոստոսի 9-ին Մոսկվայի Պետական Համալսարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ կոնգրեսի հանդիսավոր բացումը։ Տրիբունայի համաձայն, առաջին ձայնը տրվեց նախորդ՝ Մյունխենում կայացած արևելագետների XXIV կոնգրեսի պրեզիդենտ, պրոֆեսոր Է. Վալդշմիդտին, որը ողջունեց կոնգրեսի մասնակիցներին և իր լիազորությունները հանձնեց XXV կոնգրեսի պրեզիդենտ, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Բ. Դաֆուրովին։

ՍՍՌՄ կառավարության կողմից կոնգրեսը ողջունեց ՍՍՌՄ Մինիստրների Սովետի նախագահի առաջին տեղակալ Ա. Ի. Միկոյանը։ «Բնական է,— նշեց իր ճառում Ա. Ի. Միկոյանը,— որ Ասիայի և Աֆրիկայի երկրների ժողովուրդների կյանքում տեղի ունեցող շրջադարձը արմատապես փոխում է արևելագիտության բնույթն ու բովանդակությունը։ Կարելի է ուղղակի ասել, որ նրա նոր, սկզբունքային առանձնահատկությունն այն է, որ Արևելքի ժողովուրդներն այժմ ավելի, քան երբևիցե, իրենք են ստեղծում իրենց գիտությունը, որն ուսումնասիրում է նրանց պատմությունը, կուլտուրան, էկոնոմիկան, և այդպիսով գիտության օբյեկտից, որպիսին Արևելքի ժողովուրդները հանդիսանում էին մոտ անցյալում, դարձել են գիտության կերտողներ։ Ստեղծվել են արևելագիտության նոր կենտրոններ հենց Արևելքի երկրներում։ Այդ երկրների գիտնականները ուսումնասիրում են ոչ միայն իրենց ժողովուրդների անցյալը, այլև ակտիվորեն մասնակցում են նրանց կյանքում պատմական շրջադարձի շնորհիվ առաջացած պրոբլեմների մշակմանը։ ...Լիակատար իրավունքով կարելի է ասել, որ արևելագիտությունը միայն այն ժամանակ կարող է լայն ճանաչում ու հաջողություն ակնկալել, երբ նա ծառայում է Արևելքի ժողովուրդների շահերին... Մենք հուսով ենք, որ գիտական համագործակցության, կարևորագույն պրոբլեմների շուրջը կարծիքների ազատ փոխանակման և ստեղծագործական դիսկուսիաների ոգին, պրոբլեմներ, որոնք արևելագետներին սիրաբար առաջադրում է ինքը կյանքը, դրանց բովանդակ բարգությամբ ու սրությամբ, կնպաստի ներկա կոնգրեսի բեղմնավոր աշխատանքին ու դրական արդյունքներին»։

Այնուհետև ողջույնի խոսքով հանդես է գալիս Մոսկվայի քաղաքային Սովետի գործկոմի նախագահ Ն. Ի. Բորովնիկովը։

ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի անունից կոնգրեսը ողջունեց վիցե-պրեզիդենտ, ակադեմիկոս Կ. Վ. Օստրովիտյանովը։ Նա նշեց, որ Սովետական Արևելքի ժողովուրդները աճեցրել են գիտական աշխատողների ազգային կադրեր, որոնք ռուս գիտնականների համագործակցությամբ ուսումնասիրում են իրենց ժողովուրդների պատմությունը, նյութական և հոգևոր կուլտուրան։

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի անունից կոնգրեսին ուղղված ողջույնով հանդես եկավ Ա. Կունեարը, որը նշեց միջազգային համագործակցության կարևորությունը առաջադիմության համար, խաղաղության համար։ Այնուհետև լրավեց կոնգրեսի պրեզիդենտ Բ. Դաֆուրովի նյութը։ Նա ասաց, որ դեռ վերջերս արևելագիտությունը արդիականությունից հետու կանգնած և հաճախ ակադեմիական գիտություն էր թվում։ Այժմ մենք՝ արևելագետներս, գտնվում ենք ժամանակակից իրադարձությունների կենտրոնում։ Այդ է ներկա կոնգրեսի բնորոշ առանձնահատկություններից մեկը։ Նրա մյուս առանձնահատկությունն այն է, որ դեռ երբեք միջազգային ֆորում դուրս չէին եկել բուն Արևելքի երկրների այնքան ներկայացուցիչներ, որքան երբեք հավաքվել են այս դահլիճում։

Օգոստոսի 10-ին սկսվեցին կոնգրեսի սեկցիոն նիստերը, որոնք տեղի էին ունենում Մոսկվայի Համալսարանի տարբեր սրահներում։ Կոնգրեսի աշխատանքները բնթանում էին բուն արևելագիտության մասնաճյուղերի կազմակերպված 21 սեկցիաներում։ Եգիպտագիտության, խեթագիտության և ուրարտագիտության, աստուրագիտության և սեմագիտության